ԹԻՎ 4 • ԴԵԿՏԵՄԲԵՐ 2023

ԼՐԱՏՈՒ

ՆՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԾՐԱԳՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

SMARTI ծրագրի կառավարման խորհրդի ամենամյա հանդիպում

Նոյեմբերի 20-ին ՀՀ պետական կառավարման ակադեմիայում (ՀՀ ՊԿԱ) հիբրիդային ձևաչափով անցկացվեց Էրազմուս+ SMARTI ծրագրի կառավարման խորհրդի ամենամյա հանդիպումը: Ծրագրի ղեկավար խմբի նիստին մասնակցում էին ծրագրի ղեկավար Գերարդ Քալենը (Դրեզդենի տեխնոլոգիական համալսարան), նույն համալսարանի լեզուների կենտրոնի համակարգող Կատյա Ուլմանը, ՀՀ ՊԿԱ վարչական կազմի, Հայաստանի ազգային ագրարային համալսարանի, Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոնի (ՈԱԱԿ) և ծրագրի կոնսորցիումի անդամ մյուս հաստատությունների ներկայացուցիչներ:

Հանդիպման օրակարգում հետևյալ հարցերն էին.

- ծրագրի ազդեցությունը՝ շահակից բուհերի և կրթական գործընթացների վրա,
- ԱԴՄ (Անգլերենը՝ որպես դասավանդման միջոց) կենտրոնների գործունեությունը,
- անգլալեզու երկու մոդուլների փորձարկումը,
- ԱԴՄ կենտրոնների և անգլալեզու մոդուլների արտաքին գնահատումը:

Նոյեմբերի 21-ին Դրեզդենի տեխնոլոգիական համալսարանի ներկայացուցիչների հետ հանդիպում տեղի ունեցավ ՈԱԱԿ-ում: Քննարկվեցին ծրագրի շահակից բուհերում ստեղծված ԱԴՄ կենտրոնների և անգլալեզու մոդուլների արտաքին գնահատման պլանավորման և իրականացման գործընթացները:

ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԱՆԳԼԵՐԵՆՈՎ ԴԱՍԱՎԱՆԴԵԼՈՒ ՆՈՐԱՐԱՐԱԿԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅԱՆԸ, ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԻՆ ԵՎ ԳՈՐԾԻՔԱԿԱԶՄԻ ԿԻՐԱՌՄԱՆԸ՝ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆԸ, ԿԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄԸ ԲԱՐԵԼԱՎԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ

Ծրագիրը ֆինանսավորել է Եվրոպական հանձնաժողովը: Սույն լրատուն արտացոլում է միայն հեղինակ(ներ)ի տեսակետները, եւ հանձնաժողովը պատասխանատու չէ դրանում տեղ գտած տեղեկության օգտագործման համար:

Smarti Armenia SMARTI PAARA SMARTI SMARTI

Co-funded by the Erasmus+ Programme of the European Union

SMARTI ծրագրի ազգային տեղեկատվական օրը՝ Վանաձորի պետական համալսարանում

Նոյեմբերի 23-ին Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարանի Smart Caffe-ում տեղի ունեցավ Էրազմուս+ SMARTI ծրագրի շրջանակներում անցկացվող հանդիպում-միջոցառումը: Ներկա էին ինչպես Վանաձորի պետական համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմը և ուսանողությունը, այնպես էլ ներկայացուցիչներ տարածաշրջանի բուհերից, հյուրեր պետական կառույցներից և հասարակական սեկտորից, և, իհարկե, գործընկեր կառույցներից: Միջոցառման աշխատանքային լեզուները անգլերենն ու հայերենն էին:

Ողջույնի խոսքով հանդես եկան Վանաձորի պետական համալսարանի ռեկտոր Ռուստամ Սահակյանը, SMARTI ծրագրի համակարգող Գերարդ Քալենը, Էրազմուս+ ազգային գրասենյակի ներկայացուցիչ Արփինե Ջրաղացպանյանը, ՀՀ ՊԿԱ պրոռեկտոր Թերեզա Խեչոյանը, ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմի զարգացման ծրագրերի մշակման և իրականացման պետ Հասմիկ Մկրտչյանը:

SMARTI նախագծի տեղական համակարգող Լուսիկ Վարդանյանը ներկայացրեց ծրագրի ներկա վիճակի հակիրճ նկարագրությունը:

ՎՊՀ ուսանողներ Արփինե Հակոբյանը, Անժելա Տեր-Մովսիսյանը, Անի Բարսեղյանը, որոնք մասնակցել էին Դրեզդենի տեխնոլոգիական համալսարանի ուսանողների կազմակերպած «Հայաստանի տնտեսության PESTLE վերլուծության» քննարկմանը և Լիվերպուլի Ջոն Մուրսի համալսարանի կազմակերպած առցանց քննարկմանը, արտահայտեցին իրենց դրական կարծիքն ու տպավորությունները և նշեցին մասնագիտական կարողությունների և միջանձնային հմտությունների զարգացման գործում նման միջոցառումների կարևորությունը:

SMARTI ծրագրի ազգային տեղեկատվական օրը՝ Հայաստանի ազգային ագրարային համալսարանում

Ս. թ. նոյեմբերի 21-ին Հայաստանի ազգային ագրարային համալսարանում (ՀԱԱՀ) տեղի ունեցավ Էրազմուս+ SMARTI ծրագրի տեղեկատվական հերթական միջոցառումը: Մասնակիցների թվում էին նախագծի ԵՄ համակարգող Գերարդ Քալենը, Դրեզդենի տեխնիկական համալ-սարանի լեզվի կենտրոնի տնօրեն Կատյա Ուլմանը, նախագծի հայաստանյան համակարգող Թերեզա Խեչոյանը, Հայաստանի տեխնոլոգիական ապագան նախաձեռնության համակարգող Կիմա Ղուլյանը և Բրիտանական խորհրդի հայաստանյան գրասենյակի ծրագրերի համակարգող Մարիամ Արզումանյանը:

ՀԱԱՀ կարիերայի զարգացման և շարունակական կրթության բաժնի վարիչ, SMARTI նախագծի համակարգող Լիանա Վարդանյանը ներկայացրեց նախագծի շրջանակում կատարված աշխատանքը, նշեց ձեռքբերումները: Քննարկվեցին անգլերենի զարգացմանը միտված դասընթացների և միջոցառումների կազմակերպման վերաբերյալ առաջարկները: Գերարդ Քալենը և մյուս հյուրերը գոհունակություն հայտնեցին նախագծի ողջ ընթացքի համար: Միակ «հաճելի» մտահոգությունը, որ արտահայտեց պարոն Քալենը, միջազգայնացման առումով օրինակելի բուհում՝ Դրեզդենի տեխնիկական համալսարանում, հայ ուսանողների շատ քիչ թիվն է:

Անգլերենի և առհասարակ օտար լեզուների անբավարար իմացությունը խոչընդոտ է ուսանողների հետագա զարգացման ու մասնագիտացման առումով: Դա նաև ՀԱԱՀ միջազգային կապերի դեպարտամենտի ղեկավար Գարեգին Համբարձումյանի մտահոգությունն է, մանավանդ՝ շարժունության ծրագրերի բազմաքանակ և բազմազան հնարավորությունների պայմաններում, որով առանձնանում է մեր բուհը:

Հանդիպման ավարտին հյուրերն այցելեցին SMARTI ԱԴՄ նորաբաց կենտրոն:

SMARTI ծրագրի ազգային տեղեկատվական օրը՝ Շիրակի պետական համալսարանում

Նոյեմբերի 24-ին Էրազմուս+ SMARTI ծրագրի ազգային իրազեկման օրերի շրջանակներում Շիրակի պետական համալսարանում (ՇՊՀ) տեղի ունեցավ ԱԴՄ կենտրոնի բացումը:

Կենտրոնի բացման հանդիսավոր արարողությանը ներկա էին SMARTI ծրագրի համակարգող Գերարդ Քալենը, նույն համալսարանի Լեզուների ուսուցման կենտրոնի տնօրեն Կատյա Ուլմանը, SMARTI ծրագրի հայաստանյան համակարգող, ՀՀ ՊԿԱ պրոռեկտոր Թերեզա Խեչոյանը, ՇՊՀ-ի ռեկտոր Երվանդ Սերոբյանը, SMARTI ծրագրի ՇՊՀ համակարգող Հովիկ Մելքոնյանը, ՇՊՀ և Գյումրու մյուս բուհերի վարչական և պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչներ, ուսանողներ:

Միջոցառման սկզբում հյուրերին ողջունեց ՇՊՀ ռեկտոր Երվանդ Սերոբյանը: Նա արդյունավետ համագործակցության համար առանձնահատուկ շնորհակալություն հայտնեց Գերարդ Քալենին և նշեց, որ միջազգային համագործակցությունը ՇՊՀ-ի ռազմավարական առաջնահերթություններից է: Միջազգային համագործակցության շնորհիվ ՇՊՀ-ում հիմնվել են կառուցվածքային նոր ստորաբաժանումներ, Կենսաեխնոլոգիական լաբորատորիան և այլն: Որպես ծրագրի վերջնարդյունք համալսարանում նախատեսվում է հիմնել կառուցվածքային ևս մեկ ստորաբաժանում՝ ԱԴՄ կենտրոն, որը կրթական ծառայություններ կմատուցի ոչ միայն ՇՊՀ ուսանողներին և աշխատակիցներին, այլև Գյումրի քաղաքի և Շիրակի մարզի շահագրգիռ բնակչությանը:

Գ. Քալենը ողջունեց ներկաներին և շնորհակալություն հայտնեց մասնակցության համար: Նա նշեց, որ SMARTI ծրագիրը մեծ նշանակություն ունի ոչ միայն հայաստանյան բուհերի, այլև միջազգային համագործակցության համար: Որպես ծրագրի վերջնարդյունք Հայաստանի և Դրեզդենի համալսարանների պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչները և ուսանողները շարժունության ծրագրի շրջանակներում կիրականացնեն փոխադարձ այցելություններ, փորձի և տեղեկության փոխանակում:

Հ. Մելքոնյանը ողջունեց միջոցառման մասնակիցներին և շնորհակալություն հայտնեց ծրագրին մասնակից բոլոր համալսարաններին այս նոր գաղափարը ներդնելու և գործարկելու պատրաստակամության համար: Նա ներկայացրեց նշված ծրագրի շրջանակներում ՇՊՀ-ում կատարված աշխատանքները:

Ողջույնի խոսքով հանդես եկան նաև Թ. Խեչոյանն և Կ. Ուլմանը: ԱԴՄ կենտրոնի բացման կարմիր ժապավենը կտրեցին ՇՊՀ ռեկտորն ու Գ. Քալենը:

SMARTI ծրագրի ազգային տեղեկատվական օրը՝ Գորիսի պետական համալսարանում

Նոյեմբերի 22-ին Գորիսի պետական համալսարանում (ԳՊՀ) տեղի ունեցավ Էրազմուս+ SMARTI ծրագրի շրջանակում նախատեսված միջոցառումների շարք, որին մասնակցեցին և ողջույնի խոսքով հանդես եկան ԳՊՀ բնագիտական և ինժեներատնտեսագիտական մասնագիտությունների ֆակուլտետի դեկան Լիլիթ Աթաբեկյանը, SMARTI ծրագրի համակարգող Գերարդ Քալենը, ծրագրի հայաստանյան համակարգող Թերեզա Խեչոյանը, Հայաստանում Էրազմուս+ ազգային գրասենյակի ներկայացուցիչ Արփինե Ջրաղացպանյանը, Գորիս համայնքի ղեկավարի տեղակալ Իրինա Յոլյանը, ինչպես նաև համալսարանի ներքին և արտաքին շահակիցներ:

ԳՊՀ որակի գնահատման և ապահովման բաժնի աշխատակից Մերի Գրիգորյանը միջոցառման մասնակիցներին ներկայացրեց SMARTI ծրագիրը, ԱԴՄ կենտրոնի գործառույթները և ԳՊՀ-ի մշակած երկու մոդուլների պիլոտային դասընթացները:

Միջոցառման ընթացքում ԳՊՀ ուսանողները հյուրերին ներկայացրին ԱԴՄ-ի հեռանկարներն իրենց պատկերացմամբ և հարցուպատասխանի միջոցով անդրադարձան ակադեմիական շարժունության ծրագրերին:

Միջոցառման շրջանակում տեղի ունեցավ ԱԴՄ կենտրոնի պաշտոնական բացումը:

SMARTI ծրագրի հաջողությունների հանրահռչակում՝ համաշխարհային բեմում

SMARTI ծրագրի հայաստանյան համակարգող, ՀՀ ՊԿԱ պրոռեկտոր Թերեզա Խեչոյանը մասնակցել է միջազգային մի շարք միջոցառումների և ներկայացրել ծրագրային գործունեության արդյունքներն ու ձեռքբերումները:

Մասնավորապես նա ներկա է գտնվել և տարածել է SMARTI ծրագրի վերաբերյալ տեղեկությունը հետևյալ իրադարձությունների ընթացքում.

- Մարիբորի համալսարանում (Սլովենիա) մասնակցել է **Միջազգային շաբաթվա** միջոցառմանը և դասախոսություններ կարդացել Տնտեսագիտության և բիզնեսի ֆակուլտետի ուսանողների համար,
- Բրաշովի Տրանսիլվանիայի համալսարանում (Ռումինիա) դասախոսություններ է կարդացել տնտեսագիտության և բիզնեսի կառավարման ֆակուլտետի ուսանողների համար,
- Գերմանական միջազգային համագործակցության ընկերության (GIZ) «Արևելյան գործընկերության տարածաշրջանային հիմնադրամ՝ հանրային կառավարման բարեփոխումների համար» ծրագրի շրջանակում մասնակցել է Բեռլինում Հերթի դպրոցի հետ համագործակցությամբ կազմակերպված «Մասնագիտական քաղաքացիական ծառայությունը և ՄԿՈՒՆ՝ Արևելյան գործընկերության երկրներում» միջոցառմանը՝ նախատեսված Արևելյան գործընկերության երկրների կին առաջնորդ-ներկայացուցիչների համար,
- որպես խոսնակ հանդես է եկել Լատվիայի կրթության և գիտական հետազոտությունների նախարության և Skillman.EU ընկերության (Իտալիա) կազմակերպած «Հմտությունների մոլորակ. ցանցային ներուժի նորացված հեռանկար» խորագրով Skillman միջազգային ֆորումին (Ռիգա, Լատվիա), որին մասնակցում էին կրթության ոլորտի ավելի քան 300 ներկայացուցիչներ,
- մասնակցել է ՄԱԿ-ի Ասիայի և խաղաղօվկիանոսյան երկրների տնտեսական և սոցիալական հանձնաժողովի տեղեկատվական և հաղորդակցության տեխնոլոգիաների զարգացման կենտրոնի (UN–APCICT/ESCAP) թվային առաջնորդների ծրագրի շրջանակներում իրականացվող գործողություններին՝ նվիրված թվային փոխակերպման միջոցով կին ձեռներեցների հզորացմանը:

Մտքերի համատեղմամբ կերտենք համաշխարհային ապագան:



SMARTI ՈՒՍՈՒՑՈՒՄ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅՈՒՆ

ԱԴՄ կենտրոնի բացում և մոդուլների 1-ին փորձարկում՝ ՀՀ ՊԿԱ-ում

Նոյեմբերի 21-ին ՀՀ ՊԿԱ-ում տեղի ունեցավ ԱԴՄ կենտրոնի բացումը: Էրազմուս+ SMARTI ծրագրի ֆինանսական աջակցությամբ կահավորված կենտրոնն այսուհետ կծառայի ակադեմիայում անգլերենի դասավանդմանը: Հեռահար նպատակը «Հանրային կառավարում» կրթական ծրագրի անգլերեն դասավանդումն է, ինչը կնպաստի հաստատության միջազգայնացմանը, ուսանողների և դասախոսների շարժունությանը:

Դեկտեմբերի 6-ին ծրագրի շրջանակում մշակված մոդուլների փորձարկման նպատակով ԱԴՄ կենտրոնում մեկնարկեց առաջին դասընթացը: Իրականացված աշխատանքին ծանոթանալու և մոդուլների առաջին փորձարկումը գնահատելու համար դիտորդական այցով ակադեմիայում էր SMARTI ծրագրի կոնսորցիումի անդամ, Պորտուգալիայի կաթոլիկ համալսարանի ներկայացուցիչ Էդուարդո Կարդոզոն:



SMARTI ծրագրի շրջանակում ակադեմիան հանձնառել էր մշակել երկու՝ «Անգլերենով դասավանդման բանավոր հմտություններ. մաս 2 (ներառյալ քննադատական մտածողությունը խթանող իրավիճակային խնդիրներ)» և «Անգլերենը՝ որպես դասավանդման միջոց. անհատական ուսուցման աջակցում» մոդուլները: Հենց այդ թեմաներով անցկացվեց դասընթացի առաջին դասը: Ակնկալիքների մասին խոսեցին նաև վերոնշյալ մոդուլների հեղինակները՝ Թ. Խեչոյանը և անգլերենի դասախոս Լուսինե Գրիգորյանը:

Դեկտեմբերի 12-ին տեղի ունեցավ երկրորդ դասը, որի հիմնական նպատակը «Անգլերենը՝ որպես դասավանդման միջոց. անհատական ուսուցման աջակցում» մոդուլը բազմակողմանի ներկայացնելն էր: Դասընթացավարներին՝ Թ. Խեչոյանին և Լ. Գրիգորյանին հաջողվեց աշխույժ մթնոլորտ ստեղծել լսարանում: Լ. Գրիգորյանը ընդգծեց վերլուծական մտածողության և իրավիճակային խնդրի վրա հիմնված ուսուցման կարևորությունը, ապա լսարանին խիստ արդիական՝ անտառահատման թեմայով իրավիճակային խնդիր առաջարկեց:

Դեկտեմբերի 20-ին անցկացվեց ամփոփիչ դասը: Վերջին՝ երրորդ դասին Լ. Գրիգորյանի բանախոսության թեման նվիրված էր վերլուծական մտածողությանը: Նա անդրադարձավ վերլուծական մտածողության առավելություններին և դրա ձևավորմանը նպաստող մարտավարություններին ու գործիքներին:

Թ. Խեչոյանը ներկայացրեց Ռիգայի տեխնիկական համալսարանում մշակված հարցաթերթը, որը պարտավոր են լրացնել դասախոսները իրենց գործընկերների դասերին մասնակցելուց հետո: Հարցերի բավական մեծ քանակը հնարավորություն է տալիս բազմակողմանի դիտարկել դասի ընթացքը և անաչառ գնահատական տալ:

Մոդուլների փորձարկման դասընթացի ավարտին մասնակիցներին և դասընթացավարներին հավաստագրեր հանձնեց ՀՀ ՊԿԱ ռեկտոր Խաչատուր Ղազեյանը:

ԱԴՄ մոդուլների 1-ին փորձարկում՝ Վանաձորի պետական համալսարանում

2023 թ. նոյեմբերի 23-ին ՎՊՀ-ում SMARTI ծրագրի շրջանակներում տեղի ունեցավ ԱԴՄ մոդուլների փորձարկման առաջին նիստը ներքին և արտաքին շահակիցների մասնակցությամբ: Միջոցառման առանցքում ՎՊՀ դասախոսներ Արինե Դանիելյանի, Արմինե Գևորգյանի, Գոհար Դոխոլյանի և Նունե Խուբլարյանի ներկայացումներն էին: Այդ մոդուլներն են «Հաղորդակցական մոտեցում. ուսանողակենտրոն և խառը (ՏՀՏ-ի կիրառմամբ) կամ էլեկտրոնային կրթության ռազմավարություններ»-ը և «ԱԴՄ ուսանողների գնահատման ռազմավարությունը (պաշտոնական և այլընտրանքային գնահատում)»-ը:

Ա. Դանիելյանը ներկայացրեց «Ուսանողակենտրոն ուսուցում և կառուցողական ուսուցման տեսություն, նախագծային ուսուցում, հետազոտության վրա հիմնված ուսուցում և շրջված դասարան» թեմայի տեսական մասը՝ համաձայն մոդուլ 1-ինի: Ա. Գևորգյանը ներկայացրեց գործնական մասը՝ խոսելով «Գովազդը ռեստորանային գործարարության մեջ» թեման և կիրառելով «Շրջված դասարան» մեթոդը:

2-րդ մոդուլի 3-րդ դասը՝ «Ձևավորող, գումարային, խառնուսուցման գնահատման տեխնիկան և ռազմավարությունը», ներկայացրին Գ. Դոխոլյանը և Ն. Խուբլարյանը: Գ.Դոխոլյանն անդրադարձավ ձևավորման, ամբողջական և խառնուսուցման գնահատման տեսական հայեցակետերին՝ ներկայացնելով գնահատման այդ ձևերի առավելություններն ու թերությունները: Ն. Խուբլարյանն անցավ գործնական մասին՝ ձևավորող և ամփոփիչ գնահատման համար ցուցադրելով ՏՀՏ որոշ արդյունավետ գործիքներ: Միջոցառման ավարտին ԵՄ ներկայացուցիչները գոհունակություն հայտնեցին ՎՊՀ-ին՝ ցայսօր իրականացված աշխատանքի համար և խրախուսեցին շարունակել ծրագրված դասերի փորձնական աշխատանքները:

Դասընթացի 2-րդ մասը ՎՊՀ-ի ներքին շահակիցների համար անցկացվեց դեկտեմբերի 19-ից 25-ը: Դեկտեմբերի 19-ին կայացած դասին Ա. Դանիելյանն անդրադարձավ պաշտոնական և այլընտրանքային գնահատման տեխնիկաներին և ռազմավարություններին առնչվող խնդիրներին, իսկ Ա. Գևորգյանը ներկայացրեց «Գովազդը՝ ռեստորանային գործարարության մեջ» դասընթացի գնահատման գործնական մեթոդները՝ ցուցադրելով այլընտրանքային գնահատման գործիքներ՝ «Kahoot», «Padlet», «Flip» և այլն: Նա նաև կազմակերպեց «Kahoot» ներգործուն դասախաղը՝ դեպք-սցենար վերլուծությամբ:

Դեկտեմբերի 20-ի դասընթացը նվիրված էր հաղորդակցական և ուսանողակենտրոն մոտեցման հիմնական սկզբունքներին, մասնավորապես համագործակցային ուսուցմանը: Անգլերենի մասնագետ Լուսիկ Վարդանյանը նախ կարևորեց արդյունավետ հաղորդակցության և համագործակցության հիմնական տարրերը, որոնք առաջընթացի գրավականն են, ապա մանրամասնեց հաղորդակցական մոտեցումների համապատասխանեցումը Բլումի դասաբանական 6 մակարդակներին՝ ըստ գիտելիքների 4 հարթության: Դասախոս Աննա Խաչատրյանն էլ ներկայացրեց համագործակցային ուսուցման մի քանի ռազմավարություն՝ առաջարկելով «Gallery Walk», «Think-Pair-Share» և «Four Corners» ներգործուն վարժությունները:

Դեկտեմբերի 21-ին՝ գնահատման հայեցակարգին նվիրված դասին, Լ. Վարդանյանը և Ա. Խաչատրյանը կենտրոնացան 2-րդ մոդուլի շրջանակներում գնահատման եռակի նպատակադրման վրա: Լ. Վարդանյանն ընդգծեց գնահատման և հիմնական ուսուցման բաղադրիչներին (ուսուցման արդյունքներ, գործողություններ և գնահատման մեթոդներ) համապատասխանեցնելու կարևորությունը: Նա նաև խոսեց արդյունքների, առաջադրանքների և կարողունակությունների վրա հիմնված գնահատման առանձնահատկությունների մասին:

Ա. Խաչատրյանը ներկայացրեց գնահատման գործիքներ՝ դերախաղ, դեպքերի քննարկում, թեստեր և դեպքերի ուսումնասիրություն, հետադարձ կապ և «SMART» սանդղակ: Նա ընդգծեց «Nearpod»-ի ներդրման կարևորությունը ներգործուն գնահատման համակարգում:

Դեկտեմբերի 25-ի ամփոփիչ հանդիպումը նվիրված էր հաղորդակցական մոտեցմանը և խառը/ՏՀՏ/էլեկտրոնային ուսուցմանը: Գ. Դոխոլյանի և Ն. Խուբլարյանի վարած դասն ընդգրկում էր տեսական հայեցակետեր և ՏՀՏ գործիքներ, որոնցից են «TED-Ed»-ն ու «Socrative»-ը: Դասընթացի ավարտին մասնակիցներին շնորհվեցին վկայականներ՝ ըստ համապատասխան ձեռքբերումների:

ԱԴՄ մոդուլների 1-ին փորձարկում՝ Հայաստանի ազգային ագրարային համալսարանում

Դեկտեմբերի 4-ին Էրազմուս+ SMARTI ծրագրի շրջանակներում ՀԱԱՀ-ում տեղի ունեցավ համալսարանի մշակած 2 մոդուլներով փորձուսուցման դասընթացի արտաքին գնահատումը: Միջոցառմանը մասնակցելու և մոդուլները գնահատելու նպատակով Հայաստան էր ժամանել Պորտուգալիայի կաթոլիկ համալսարանի դասախոս Էդուարդո Կարդոսոն: Վերջինս մեծ գոհունակությամբ արձանագրեց մոդուլները պատշաճ մակարդակով կազմելու և դասավանդելու փաստը՝ հատուկ նշելով նյութերի հետաքրքրության և դասերի ինտերակտիվ, ուսանողակենտրոն լինելու մասին: Փորձարկվող մոդուլներով դասավանդման գնահատման համար ծրագրի շրջանակում կազմակերպվել էր նաև օնլայն հարցում: Հարցմանը պետք է մասնակցեին թե՛ փորձագետ Էդուարդո Կարդոսոն, թե՛ դասընթացի մասնակիցները և թե՛ դասընթացավարը: Բոլորը շատ բարձր գնահատեցին ողջ գործընթացը:

ՀԱԱՀ 2 մոդուլների հեղինակն ու դասընթացավարն է անգլերենի դասախոս, մ.գ.թ դոցենտ Լիանա Վարդանյանը: Մոդուլների մշակմանը օժանդակել են նաև Գառնիկ Սևոյանը և Սերյոժա Կարապետյանը՝ որպես ճշգրիտ գյուղատնտեսության մասնագետներ:

ՀԱԱՀ-ն պատասխանատու է 2 մոդուլի համար՝ «ԱԴՄ բանավոր դասավանդման հմտություններ» և «Անգլերեն՝ հատուկ նպատակների համար (ԱՀՆ)»: 2 մոդուլների դասավանդման ընդհանուր տևողությունը 3 շաբաթ է (շաբաթական 3 հանդիպում):

Հարկ է նշել, որ համալսարանի շուրջ 30 մասնակիցներ մեծ ոգևորությամբ են դասընթացներին մասնակցելու պատրաստակամություն հայտնել անգլերենի իմացության իրենց մակարդակը բարելավելու համար:



ԱԴՄ մոդուլների 1-ին փորձարկում՝ Գորիսի պետական համալսարանում

ԱԴՄ մոդուլներով փորձնուսուցման դասընթացը, որը մեկնարկել էր նոյեմբերի 22-ին, ԳՊՀ ԱԴՄ նորաբաց կենտրոնի համար նշանակալի իրադարձություն է՝ միտված համալսարանի ուսանողների և անձնակազմի՝ անգլերենով դասավանդման հմտությունների բարելավմանը: Դասընթացները վարում էին հմուտ մասնագետներ Նաիրա Սաֆարյանը, Նաիրա Մեժլումյանը և Լիլիթ Աթաբեկյանը:

Վերապատրաստման ծրագիրը կազմված է երկու մոդուլից.

1. Նախամոդուլային ուսումնական պլանի մշակում և կառուցվածքային ձևավորում (Եվրոպական կրեդիտների փոխանցման և կուտակման համակարգի (ԿՓԵՀ), ԵՄ թյունինգի և ԵՄ թյունինգային շրջանակի վերաբերյալ վերապատրաստում): Մոդուլը ներառում է ուսումնական ծրագրերի մշակման և ուսուցման ձևավորման հիմնական բաղադրիչները, և առանցքում այնպիսի հասկացություններ են, ինչպիսիք են ԿՓԵՀ-ը (Կրեդիտների փոխանցման և կուտակման եվրոպական համակարգ) և ԵՄ թյունինգը: ԵՄ թյունինգային շրջանակի վերաբերյալ վերապատրաստումը համապատասխանում է եվրոպական չափանիշներին և կրթական շրջանակներին:

2. **ԱԴՄ մոդուլի ուսումնական պլանի մշակում և ուսուցման ձևավորում**: Այս մոդուլն անդրադառնում է անգլերենով դասավանդման դժվարություններին՝ նպատակ ունենալով ստեղծելու ԱԴՄ ուսումնական պլանի մշակման և ուսուցման տեսական շրջանակ:

Վերապատրաստման գործընթացի անբաժանելի մասն է գնահատման և հետադարձ կապի ներառումը: Ե՛վ ԵՄ-ի, և՛ Հայաստանի ծրագրերի համակարգողները ակտիվորեն մասնակցում են վերապատրաստման դասընթացներին: ԱԴՄ կենտրոնի արդյունավետության, դասընթացավարների և ընդհանուր վերապատրաստման փորձի մասին պատկերացում կազմելու համար վերապատրաստվողներից պահանջվում է լրացնել հարցաթերթիկ: Ռիգայի տեխնիկական համալսարանի մշակած հարցաշարը հարմար գործիք է՝ ԱԴՄ կենտրոնի հարմարությունների, դասընթացավարների հմտությունների և վերապատրաստման ծրագրի ընդհանուր որակի գնահատման համար:





ԱԴՄ կենտրոնի բացում և մոդուլների 1-ին փորձարկում՝ Շիրակի պետական համալսարանում

Նոյեմբերի 24-ին Էրազմուս+ SMARTI ծրագրի ազգային տեղեկատվական օրերի շրջանակում ՇՊՀ-ում տեղի ունեցավ ԱԴՄ կենտրոնի բացումը: Տեխնիկական ժամանակակից սարքավորումներով հագեցած նորաբաց կենտրոնում «ԱԴՄ որակի ապահովում» և «ԱԴՄ հետազոտական աշխատանք գրելու հմտություններ» կրթական մոդուլները փորձարկեցին SMARTI ծրագրի ՇՊՀ համակարգող Հովիկ Մելքոնյանն և Օտար լեզուների և գրականության ամբիոնի դասախոս Հասմիկ Մատիկյանը:

Կենտրոնի բացմանը և դասընթացներին մասնակցում էին ինչպես ՇՊՀ-ի, այնպես էլ Գյումրիում գործող մյուս բուհերի շուրջ ութսունհինգ դասախոսներ և ուսանողներ:

Դասընթացներին մասնակիցներին ներկայացվեցին ինչպես կենտրոնի աշխատանքների որակի ապահովման, այնպես էլ հետազոտական աշխատանք գրելու հիմնական սկզբունքներն ու առանձնահատկությունները:

Դասընթացի ավարտին մասնակիցներն առցանց տարբերակով լրացրին համապատասխան հարցաթերթիկներ, որոնք կներկայացնեն ինչպես աշխատաժողովի կազմակերպչական աշխատանքներից, այնպես էլ նշված մոդուլների բովանդակությունից և մատուցման ձևից իրենց բավարարվածության աստիճանը, առաջարկություններն ու դիտարկումները: Ստացված տվյալների հիման վրա 2024 թ. փետրվարին կանցկացվի ներկայացված մոդուլների երկրորդ փորձարկումը:

Կենտրոնի բացման և աշխատաժողովի ընթացքում կատարված աշխատանքները լուսաբանվել են ՇՊՀ-ի պաշտոնական կայքէջում և սոցիալական ցանցերում:

Նախատեսված միջոցառումներ

ԱԴՄ դասընթաց՝ Ռիգայի տեխնիկական համալսարանում (Լատվիա)

Ռիգայի տեխնիկական համալսարանում տեղի ունենալիք ԱԴՄ դասընթացը նախատեսված է 2024 թվականի մայիս-հունիս ամիսներին: Նպատակը գործընկեր յուրաքանչյուր համալսարանի երկու ներկայացուցչի և որակի ապահովման փորձագետի վերապատրաստելն է ԱԴՄ մագիստրոսական և ասպիրանտական ծրագրերի ոլորտի ուսումնասիրման և ԱԴՄ նախաձեռնությունների ընդլայնման համար:

Ազգային տեղեկատվական 3-րդ միջոցառում և ԱԴՄ մոդուլների 2-րդ փորձարկում

Ազգային տեղեկատվական 3-րդ միջոցառումը՝ զուգակցված ԱԴՄ մոդուլների 2-րդ փորձարկմամբ, նախատեսվում է մեկնարկել 2024 թ. փետրվարից հունիս ընկած ժամանակահատվածում: Միջոցառումների շարքը կխթանի ակադեմիական համայնքի իրազեկության բարձրացմանը և ԱԴՄ հմտությունների կատարելագործմանը: Այս իրադարձություններին պրոֆեսորադասախոսական կազմի, ուսանողների և հաստատությունների արտաքին շահակիցների ներգրավումը և դասընթացներին տեսական պատկերացումների և գործնական կիրառությունների համադրումը էլ ավելի կմոտեցնեն ԱԴՄ ակադեմիական միջավայրի ձևավորման վերջնարդյունքին:

SMARTI ծրագրի միջոցառումների որակի ապահովումը

SMARTI ծրագրի շրջանակներում ԱԴՄ կենտրոնների և մշակված մոդուլների արտաքին գնահատում

Էրազմուս+ SMARTI ծրագրի շրջանակում արտաքին գնահատում կանցնեն գործընկեր բուհերի ԱԴՄ կենտրոններն ու մոդուլները: Գործընթացը համակարգելու է Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոնը (ՈԱԱԿ):

Գործընթացի կազմակերպման համար մշակված **Հավատարմագրման պլանի** համաձայն գործընկեր համալսարանների ինքնավերլուծությունն իրականացնող խմբերի համար կազմակերպվել են աշխատաժողովներ: Շահակիցների հետ քննարկումների ընթացքում ներկայացվել են ԱԴՄ կենտրոնների ինքնավերլուծության հիմնական մոտեցումները, մշակված չափանիշները և ցուցիչները:

Աշխատաժողովների ընթացքում քննարկման առանցքում էին.

- ԱԴՄ կենտրոնի կառուցվածքը, դերը և գործառույթները բուհում,
- կենտրոնների գործունեության համար սահմանված նպատակներն ու խնդիրները, բուհի առաքելության և ռազմավարական ծրագրի իրագործմանը նպաստելու համար կենտրոնների գործունեության եղանակները
- գործընթացների պլանավորումը. ինչպե՞ս են հասնելու սահմանված նպատակների իրագործմանը, հստակեցվա՞ծ են արդյոք գործընթացների պատասխանատուները և սահմանված նպատակների իրագործման համար անհրաժեշտ ռեսուրսները,
- աշխատակազմի համալրման չափանիշները. ի՞նչ պահանջներ են ներկայացվում ԱԴՄ կենտրոնի աշխատակիցներին, կա՞ն արդյոք պաշտոնների անձնագրեր, մշակվե՞լ են աշխատակազմի կարողությունների զարգացման ծրագրեր,
- համագործակցություն այլ բուհերի կամ ԱԴՄ կենտրոնների հետ. որքանո՞վ են հստակ համագործակցության ուղղությունները,
- ԱԴՄ կենտրոններում փորձարկված անգլալեզու երկու մոդուլների արդյունքները, բարելավման մեխանիզմները,
- ռեսուրսները. արդյոք կենտրոնն ունի՞ սահմանված նպատակներին համապատասխան ռեսուրսներ,
- շահակիցների հետ հաղորդակցության, տեղեկության տարածման ուղղությամբ իրականացվող աշխատանքները և կիրառվող համակարգերը,
- լավ փորձի ուսումնասիրություն, վերհանում և տարածում. ինչպե՞ս է կենտրոնը տարածում իր լավագույն փորձը և տեղայնացնում ուսումնասիրված այլ փորձը,
- ԱԴՄ կենտրոնի գործունեության որակի ապահովում. արդյո՞ք կենտրոնը կանոնավոր կերպով չափում է իր հաջողությունը՝ ըստ սահմանված նպատակների և ցուցիչների, ինչպե՞ս է ապահովում գործընթացների շարունակական բարելավումը:

Հաջորդիվ նախատեսված են աշխատաժողովներ արտաքին գնահատում իրականացնող փորձագիտական խմբերի համար: Փորձագիտական այցերը տեղի կունենան 2024 թ. առաջին եռամսյակի ընթացքում:

SMARTI ԿՈՆՍՈՐՑԻՈՒՄ

Coordinator

TECHNISCHE UNIVERSITÄT DRESDEN

Partners

RIGA TECHNICAL UNIVERSITY

LIVERPOOL JOHN MOORES UNIVERSITY

CATOLICA FACULTY OF BIOTECHNOLOGY PORTO

NATIONAL CENTER FOR PROFESSIONAL EDUCATION QUALITY ASSURANCE FOUNDATION